Հաստատում եմ՝ Հ. Զաքարյան

«_____» հունվար 2024 թ.

ՄԱՏՅԱՆ

Ուսումնական նախագծային աշխատանքների գրանցման

Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոց

2023-2024 ուստարի

Բովանդակություն

Ուսումնական նախագծի պլան	3 - 6
Աշխատանքային թերթ	7
Գնահատում	8 - 9
Հաշվետվություն	10 - 11

Ուսումնական նախագծի պլան

Դասարան՝ 7րդ դասարան

Սովորողների թիվ՝ 1

Հակոբյան Սերոբ

Ղեկավար՝ Մ

Գրիգորյան

Միջառարկայական կապ՝ հայոց լեզու, ռուսաց լեզու, անգլերեն

Աշխատանքի ձևը - արտադասարանական հետազոտություն, դասարանական քննարկումներ, գործողությունների իրականացում:

Նախագծի սկիզբ	1.	Նախագծի անունը (անվանումը)	Անսովոր մասնագիտություններ և ապագա մասնագիտություններ Հայաստանում
	2.	Հիմնահարցը (հիմնախնդիրը)	Ուսումնասիրել մասնագիտությունների աշխարհը և որոշել, թե դրանցից որոնք են հեռանկարային Հայաստանի համար
	3.	Նպատակը (ները)	• Ուսումնասիրել մասնագիտությունների առաջացման պատմությունը /հայերեն, ռուսերեն, անգլերեն/ • Պարզել , թե որ մասնագիտություններն են համարվում անսովոր • Որոշել, թե որ մասնագիտություններն են պահանջարկ ունենալու Հայաստանում

4.	Խնդիրները	Առանցքային • Ուղղորդել սովորողին, • Հետևել, որ սովորողը համագործակցի ուսուցիչների հետ, բայց նաև աշխատի ինքնուրույն • Հաճախակի քննարկել տարվող աշխատանքների ընթացքը և արդյունքները • Հետևել ժամանակացույցին:
5.	Վերջնարդյունքը (ն ե ր ը)	Սովորողը կկարողանա՝ • հավաքագրել և աշխատել տեղեկատվության հետ տարբեր հարթակներից • մշակել և վերլուծել մեծ ծավալի տեղեկատվություն, ընտրելով անհրաժեշտ • կցուցաբերի իր կողմից ստեղծագործական աշխատանք նախագծում
6.	Աշխատանքային խումբ Առաջադրանքներ	Ուսուցիչները տալիս են հանձնարարություն՝ • Ուսումնասիրել հասանելի նյութը մասնագիտությունների մասին /հայերեն, ռուսերեն, անգլերեն/ • Վերլուծել տեղեկատվությունը և ընտրել անսովոր մասնագիտությունները • Քննարկել ձեռք բերված նյութը ուսուցիչների հետ • Կազմել պատկերազարդ եռալեզու ալբոմ անսովոր մասնագիտությունների մասին • Ուսումնասիրել փոքր երկրների մասնագիտությունների պահանջարկը • Պատրաստել բուկլետ << Ապագա մասնագիտությունները Հայաստանում>>

		Ամփոփում և գնահատում	Ուսուցիչները ամփոփում են արդյունքները, տալիս բնութագրող գնահատական, ներկաները հայտնում են կարծիքներ: 30 րոպե ամփոփում, կարծիքների և առաջարկությունների հայտնում: Արդյունքների գնահատում Իրականացնել կատարողականի հիման վրա գնահատում: Արդյունքները գնահատել նախօրոք կազմված և սովորողին ներկայացված սանդղակով:Գնահատել՝ • Ընթացքը՝ 1-6 միավոր • Բովանդակությունը՝ 1-8 միավոր • Ներկայացումը՝ 1-6 միավոր Վերնշված սանդղակը համապատասխանեցնել 10 միավորանոց գնահատման ձևով

	7.	Նախագծի ընթացքը	Քայլ 1՝ Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում ուսուցիչները կատարում են հարցում՝ կատարված աշխատանքների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում կատարում փոքրիկ հուշումներ: Քայլ 2՝ Սովորողը տեղեկացնում է, թե ինչ հաջողություններ և ինչ դժվարություններ է ունեցել այդ ընթացքում, հայտնում է իր մտքերը, անհրաժեշտության դեպքում ստանում խորհուրդ: Քայլ3՝ Ուսուցիչները հանձնարարում են վերջնական տեսքի բերել կատարված աշխատանքները և պատրաստվել ներկայացման: Քայլ 4՝ Սովորողը կատարում է վերջնական վերլուծություն, արդյունքների ներկայացման ձևի ընտրություն, անհրաժեշտ պարագաների նախապատրաստում :
	8.	Հաշվետու դաս – 1 դասաժամ	Հաշվետու դասին հրավիրել տնօրենությանը, այլ ուսուցիչների, սովորողների, ինչպես նաև ըստ ցանկության կարող է ներկա լինել ծնողը: Ուսուցիչները ապահովում են սովորողին անհրաժեշտ նյութերով և դպրոցում առկա տեխնիկայով: Սովորողը ներկայացնում է իր աշխատանքը, կատարում եզրակացություններ և պատասխանում հարցերին:

Սովորող՝ Հակոբյան Սերոբի

Աշխատանքային թերթիկ

առարկա	ամսաթիվ	Կատարած աշխատանք
Հայոց լեզու	24.01.2024թ.	Ուսումնասիրել մասնագիտությունների առաջացման պատմությունը հայերեն, պարզել թե որ մասնագիտություններն են համարվում անսովոր:
Ռուսաց լեզու	31.01.2024թ.	Ուսումնասիրել հին մասնագիտությունները ռուսերեն, պարզել անսովոր մասնագիտությունները, ուսումնասիրել փոքր երկրների մասնագիտությունների պահանջարկը և թարգմանել հայերեն:
Անգլերեն	07.02.2024թ.	Ուսումնասիրել հին մասնագիտությունները անգլերեն, պարզել անսովոր մասնագիտությունները, խմբագրել և պատրաստել նյութերը ալբոմի համար:
Հայոց լեզու	14.02.2024թ.	Պատրաստել նյութերը ալբոմի համար / անսովոր մասնագիտությունները հայերեն, ներածություն, եզրակացություն:
Ռուսաց լեզու	21.02.2024թ.	Խմբագրած նյութերը ներառել պատկերազարդ ալբոմի մեջ, պատրաստել բուկլետները և սահիկաշարը: Պատրաստվել ներկայացմանը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հանրակրթության պետական նոր չափորոշչով (ՀՊՉ) նախատեսված է, որ 7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր սովորող պետք է տարվա մեջ իրականացնի առնվազն 1 նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից (ՀՊՉ, IX, 46):

Ուսումնական նախագիծը ըստ տևողության կարող է լինել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ, ըստ մասնակիցների քանակի՝ անհատական և խմբային, ըստ բովանդակության՝ որևէ առարկային վերաբերող, միջառարկայական և ինտեգրված:

Ուսումնական նախագիծն իրականացվում է 3 հիմնական փուլերով՝ նախապատրաստում, ընթացք և ամփոփում:

Ներկայացնենք ուսումնական նախագծի գնահատման ընդհանուր մոտեցումները: Անհատական կամ խմբային նախագծերի դեպքում գնահատման չափանիշների մեջ առկա են որոշակի առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն գնահատում իրականացնելիս:

Պետք է հաշվի առնել նաև, որ ուսումնական նախագծի իրականացման ժամանակ կարևորվում են ինչպես ընթացիկ աշխատանքները, այնպես էլ արդյունքներն ու դրանց ներկայացումը: Ուստի ցանկալի է, որ ուսումնական նախագծի նախապատրաստական փուլից սկսած մինչև ամփոփում և վերլուծություն յուրաքանչյուր սովորող, ինչպես նաև նախագիծը ղեկավարող ուսուցիչը(ները) պետք է պարբերաբար գրառումներ կատարեն՝ ինքնագնահատման և գնահատման ժամանակ տվյալներն օգտագործելու նպատակով:

Եթե ուսումնական նախագիծը գնահատվում է 10-միավորայինից տարբեր գնահատման սանդղակով, վերջնական միավորը փոխարկվում է 10-միավորայինի՝ ընդունված ձևով:

Օրինակ՝ եթե ուսումնական նախագիծը գնահատվելու է 20-միավորային սանդղակով, կարելի է միավորները բաշխել հետևյալ սկզբունքով.

- *Ընթացքը* – 6 միավոր, ընդ որում՝
    - նախապատրաստական փուլ (թեմայի ընտրություն, նպատակի սահմանում, դերերի բաշխում՝ եթե խմբային է) - 1 միավոր

- բուն ընթացք (խնդիրների ձևակերպում, հարցերի մշակում, պլանի կազմում, ժամանակի բաշխում, ռազմավարությունների ընտրություն, աղբյուրների ուսումնասիրում, տեղեկության հավաքագրում և վերլուծություն) - 4 միավոր
- ավարտ կամ ամփոփում (վերջնական մշակում, աշխատանքի ձևավորում) - 1 միավոր

Բովանդակությունը – 8 միավոր, ընդ որում՝

- համապատասխանությունը թեմային - 3 միավոր
- ամբողջականությունը - 2 միավոր
- հիմնավորվածությունը - 2 միավոր
- գրագիտությունը - 1 միավոր

Ներկայացումը – 6 միավոր, ընդ որում՝

- ձևը/միջոցը (սահիկաշար, ֆիլմ-հոլովակ, երաժշտություն, համերգ, նկար, պաստառ, գրքույկ, բեմականացում և այլն) - 3 միավոր
- խոսքը - 3 միավոր

Հակոբյան Սերոբ - 19 միավոր/ 9 գնահատական

Ընթացքը – 6 միավոր
Բովանդակությունը – 7 միավոր
Ներկայացումը – 6 միավոր

Ընդամենը 19 միավոր/ 9 գնահատական